ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» հունիսի 2011թ. **N-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՕՓԵՐԵՅՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետին և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ հոդվածներին ու 11-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, հիմք ընդունելով ՍՎԱՐԿՈ Էյ Ջի ընկերության ընդհանուր ժողովի 21.05.2011թ. որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Ստեղծել «Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

2. Սահմանել «Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալը՝ 1000 հազ. դրամ:

3. Հաստատել «Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

4. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել պետական գրանցումը և ընկերության հիմնադրի՝ օրենքով սահմանված մյուս լիազորությունների իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՕՓԵՐԵՅՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքում ժամանակակից, ապահով և մատչելի ճանապարհային երթևեկության կարգավորման և անվտանգության համակարգ ներդնելու նպատակով, հաշվի առնելով այն, որ ՍՎԱՐԿՈ Էյ Ջի ավստրիական ընկերությունը համաշխարհային առաջատար ընկերություն է՝ մասնագիտացված ճանապարհային ցուցանակների, ազդանշանային և ճանապարհային երթևեկության կարգավորման համար նախատեսված սարքավորումների, ծառայությունների մատուցման և լուծումների առաջարկման ոլորտում, սույն թվականի փետրվարի 10–ին Երևանի քաղաքապետարանի և ՍՎԱՐԿՈ Էյ Ջի ավստրիական ընկերության միջև կնքվել է երկարաժամկետ համագործակցության պայմանագիր:

Նախնական փուլում համագործակցության շեշտը դրվելու է Երևան քաղաքի ավտոկանգառների կառավարման և փողոցների լուսավորության վրա:

Համագործակցության նպատակն է մշակել և գործարկել համապարփակ, սիներգետիկ, ժամանակակից, ապահով և մատչելի ճանապարհային երթևեկության և անվտանգության համակարգի կառավարում Երևան քաղաքում:

Կնքված պայմանագրի դրույթներն ի կատար ածելու նպատակով, հաշվի առնելով Երևան քաղաքի համար ժամանակակից ճանապարհային երթևեկության և անվտանգության համակարգի կառավարման ներդրման անհրաժեշտությունը, առաջարկվում է ՍՎԱՐԿՈ Էյ Ջի ընկերության հետ համատեղ ստեղծել «Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՕՓԵՐԵՅՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ԵՐԵՎԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՕՓԵՐԵՅՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Երեւան քաղաքի ավագանու
2011 թվականի հուլիսի ---ի N-Ա որոշման

Drawn up on .....2011 and consists of 23 pages Printed only in 05 copies	Կազմված է .....2011թ. և բաղկացած է 23 թերթից Տպագրված է ընդամենը 05 օրինակ
Copy № 02	Օրինակ □ 02
Approved by	ՀԱՍՏԱՏՎԱԾ է
the Decision of the Founders of “Yerevan Transport Operation” LLC dated on 24.11.2011.	«Երեւան Տրանսպորտ Օփերեյշն» ՍՊԸ հիմնադիրների .....2011թ. որոշմամբ
(Decision № ...)	(Որոշում N...)
Authorized person:	Լիազորված անձ
……	……
REGISTERED	ԳՐԱՆՑՎԱԾ է
by the Arabkir Territorial Subdivision of State Registry of legal entities of the Republic of Armenia	Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիր տարածքային բաժնի կողմից
on “___” _____2010	….. ……..2011թ.
Registration No. _____	գրանցման թիվ …. …… …….
Registration Certificate _____	վկայական ……
Head of Arabkir Territorial Subdivision	Արաբկիրի տարածքային բաժնի պետ՝
.....yan ----------	.....յան ----------
C H A R T E R OF “Yerevan Transport Operation” LIMITED LIABILITY COMPANY	**«Երեւան Տրանսպորտ Օփերեյշն» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
YEREVAN 2011	Ե Ր Ե Վ Ա Ն 2011

1 GENERAL PROVISIONS	**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**
1.1 Scope of regulation	**1.1. Կարգավորման առարկան**
"**Yerevan Transport Operation**" Limited Liability Company (hereinafter referred to as "the Company") is founded by the founders' decision dated **……**.	«**Երեւան Տրանսպորտ Օփերեյշն**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն»), հիմնադրվել է հիմնադիրների.....՝ .....թ. որոշմամբ:
This Charter (hereinafter referred to as "the Charter") regulates the activity of the Company in conformity with the Civil Code of the Republic of Armenia (hereinafter referred to as "the Code"), and the Law of the Republic of Armenia "On limited liability companies" (hereinafter referred to as "the Law"), other RA laws, and in cases envisaged by law it is regulated by other legal acts accordingly.	Սույն Կանոնադրությունը (այսուհետ՝ «Կանոնադրություն») կարգավորում է Ընկերության գործունեությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք»), «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք»), ՀՀ այլ օրենքների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավական ակտերի համապատասխան:
The legal capacity of the Company arises from the moment of its state registration without any time limitation and terminates from the moment of record on its liquidation made in the state registration book.	Ընկերության իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից առանց ժամկետային սահմանափակման եւ դադարում է լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառում կատարելու պահից:
1.2 Responsibility	**1.2. Պատասխանատվությունը**
The relation between the participants of the Company and the Company are regulated by the Code, the Law and the present Charter. The requirements of this Charter are binding for the participants of the Company and management bodies thereof.	Ընկերության մասնակիցների եւ Ընկերության միջեւ հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով, Օրենքով, , սույն կանոնադրությամբ: Սույն կանոնադրության պահանջները պարտադիր են Ընկերության մասնակիցների և կառավարման մարմինների համար:
Company has its own detached property, and is responsible for its obligations with all its property, may acquire on its own name proprietary and personal non-proprietary rights, bear obligations and be plaintiff or defendant in the court. Company's Participant is not liable for Company's obligations and bears the risk of losses connected with the Company's activities within the limits of the value of their shares.	Ընկերությունը ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Ընկերության մասնակիցը պատասխանատու չէ Ընկերության պարտավորությունների համար և իր ներդրած ավանդի արժեքի սահմաններում կրում է Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
The Company is not liable for the obligations of its participants. The Republic of Armenia and the communities are not responsible for Company's liabilities, provided that the state and local self governance bodies appearing on behalf of the latter's have not assumed those obligations as a third party or guaranteed their implementation as a guarantor. The Company is not responsible for the liabilities of the Republic of Armenia and communities.	Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակցի պարտավորությունների համար: Հայաստանի Հանրապետությունը եւ համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար, եթե վերջիններիս անունից հանդես եկող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները դրանք չեն ստանձնել որպես երրորդ անձ կամ չեն երաշխավորել դրանց կատարումը որպես երաշխավոր: Ընկերությունը

	պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության եւ համայնքների պարտավորությունների համար:
1.3 Name The full firm name of the Company is: in Armenian: §ºñ»õ³Ý îñ³ßßáõÙ³Ý ú÷»ñ»ÛßÝ¦ ë³ÑÙ³Ý³÷³Ï å³ï³ëË³Ý³ïíáõÃÛ³Ùµ ÁÝÏ»ñáõÃÛáõÝ in English: „**Yerevan Transport Operation**” Limited Liability Company The brief firm name of the Company is: in Armenian: §ºñ»õ³Ý îñ³ßßáõÙ³Ý ú÷»ñ»ÛßÝ¦ êäÀ in English: „**Yerevan Transport Operation**” LLC	**1.3. Անվանումը** Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝ հայերեն լեզվով՝ «**Երեւան Տրանսպորտ Օփերեյշն**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն անգլերեն լեզվով՝ „**Yerevan Transport Operation**» Limited Liability Company Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝ հայերեն լեզվով՝ «**Երեւան Տրանսպորտ Օփերեյշն**» ՍՊԸ անգլերեն լեզվով՝ «**Yerevan Transport Operation**»LLC
1.4 Location The location of the Company its legal address is as follows: Arabkir Street 17, building #27, Apt. 36, Yerevan 0051, republic of Armenia	**1.4. Գտնվելու վայրը** Ընկերության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն Ք.Երեւան, 0051 Արաբկիր 17 փող., 27 շենք բն 36:
1.5 Seal The Company has its round seal (engraved in Armenian and English languages), a stamp and blanks, as well as it may have logo registered in the manner prescribed by the law, trade, commercial and other marks and other identifying requisites.	**1.5. Կնիքը** Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն և անգլերեն գրառումներով), դրոշմակնիք եւ ձևաթղթեր, ինչպես նաեւ կարող է ունենալ օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առեւտրային եւ այլ նշաններ ու անհատականացման այլ վավերապայմաններ:
1.6 Branches and Representations of the Company The Company based on the decision of the General meeting of its participants may establish branches and representative offices. Establishment of the Company’s branches and representative offices in the territory of the Republic of Armenia is provided in accordance with the Code and the Law and outside the RA it is regulated by the legislation of the given country if otherwise provided by the international agreements signed by the Republic of Armenia. The Branch of the Company is a detached subdivision thereof outside its official location, which performs the Company’s all functions or a part of them, including representational functions. The representation of the Company is a detached subdivision thereof outside its official location, which represents the interests of the Company and provides their protection. The branches and representations are not legal entities and act on the basis of the Charter approved by the Company. The Company shall provide the branches and representations with property. The managers of the branches and representations of the Company are	**1.6. Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները** Ընկերությունն իր մասնակիցների Ընդհանուր ժողովի որոշման հիման վրա կարող է ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ: Հայաստանի Հանրապետության տարածքում Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը իրականացվում է Օրենսգրքին եւ օրենքին համապատասխան, իսկ դրա սահմաններից դուրս՝ տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության կողմից կնքված միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ: Ընկերության մասնաճյուղը Ընկերության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որը իրականացնում է Ընկերության բոլոր գործառույթերը կամ դրանց մի մասը, այդ թվում՝ ներկայացուցչության գործառույթները: Ընկերության ներկայացուցչությունը Ընկերության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որը

appointed by the Company and act based on the powers of attorney issued by the Company. The branches and representations conduct their activity on behalf of the Company. The Company is not liable for the activity of its branches and representations.	ներկայացնում է Ընկերության շահերը և իրականացնում է դրանց պաշտպանությունը: Մասնաճյուղերը և ներկայացուցչություններն իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրության հիման վրա: Ընկերության կողմից մասնաճյուղերին և ներկայացուցչություններին հատկացվում է գույք: Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարները նշանակվում են Ընկերության կողմից և գործում են Ընկերության կողմից տրված լիազորագրերի հիման վրա: Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները իրենց գործունեությունն իրականացնում են Ընկերության անունից: Ընկերությունը պատասխանատվություն է կրում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար:
2 SUBJECT OF ACTIVITY AND OBJECTIVES OF THE COMPANY	**2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**
2.1 Objectives	**2.1. Նպատակը**
The activity objective of the Company is aimed at gaining profit from economic activity (including commercial).	Ընկերության գործունեության նպատակն է տնտեսական գործունեություն (այդ թվում առեւտրային) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:
The main type of activities of the Company are as follows: Transport Management Yerevan The Company can implement any economic activity not prohibited by the law.	Ընկերության գործունեության հիմնական տեսակն է՝ Երեւանում տրանսպորտի կառավարման գծով գործունեություն Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:
2.2 Licenses	**2.2. Լիցենզիաները**
In some cases established by the law the Company may carry out certain types of activities only upon availability of appropriate license /special authorization/, from the moment of obtaining license or from the date specified therein. If the license provision conditions provide that the Company cannot perform any other activity than those indicated in the license, or some limitations are imposed on certain types of activity, then the Company, during the license validity, shall not have the right to take up any such activity, except those specified by the license.	Օրենքով սահմանված դեպքերում գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի /հատուկ թույլտվության/ առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ՝ բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների:
2.3 The Company's scope of activity and rights	**2.3. Ընկերության գործունեության առարկան և իրավունքները**

The Company shall have right to: 2.3.1 acquire, own and manage different types of property, property rights, including also rights towards immovable property; acquire and implement intellectual property rights, and obtain licenses;	Ընկերությունը իրավունք ունի՝ 2.3.1. ձեռք բերել, տիրապետել և տնօրինել տարբեր տեսակի գույք, գույքային իրավունքներ, այդ թվում նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ, ձեռք բերել և իրականացնել մտավոր սեփականության իրավունքներ, ստանալ լիցենզիաներ,
2.3.2 perform export-import operations;	2.3.2. կատարել ներմուծման-արտահանման գործարքներ,
2.3.3 implement any type of activities, not prohibited by law, including consulting, marketing, managerial, etc.;	2.3.3. ծավալել օրենքով չարգելված ցանկացած տեսակիգործունեություն՝ ներառյալ խորհրդատվական, շուկայագիտական բնույթի,
2.3.4 in the order established by the Code and Law create daughter and dependent companies, branches, open representations, as well as perform investments to organization both in the Republic of Armenia and outside;	2.3.4. Օրենսգրքով, Օրենքով սահմանված կարգով ստեղծել դուստր և կախյալ ընկերություններ, մասնաճյուղեր, բացել ներկայացուցչություններ, ինչպես նաև ներդրումներ կատարել ընկերության կանոնադրական կապիտալում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և դրա սահմաններից դուրս,
2.3.5 open, possess and manage banking accounts in the RA drams and foreign currency both in the territory of the Republic of Armenia and outside;	2.3.5. Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես նաև այլ երկրներում բացել, ունենալ և տնօրինել բանկային հաշիվներ ՀՀ դրամով և արտարժույթով.
3 COMPANY'S PARTICIPANTS	**3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ**
Company's participants are considered persons having property right towards share(s) from the moment of state registration of the Company. Participants can be changed in the manner established by the Charter through appointment, dismissal, alienation of the whole share, as well as in case of imposing levy on the whole part of share.	Ընկերության մասնակիցներ են համարվում Ընկերության պետական գրանցման պահից՝ բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք: Մասնակիցները կարող են փոփոխվել Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մասնակիցների ընդունման, հեռացման, ամբողջ բաժնեմասի օտարման միջոցով, ինչպես նաև մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու դեպքում:
4 RIGHTS AND OBLIGATIONS OF THE COMPANY'S PARTICIPANTS	**4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
4.1 The rights of a participant	**4.1. Մասնակցի իրավունքները**
Participant shall have the right to: 4.1.1 in the order established by the law and the present Charter participate in the management of the Company personally or through his/her representative; 4.1.2 appear with suggestions at the general meeting of participants of the Company;	Մասնակիցն իրավունք ունի՝ 4.1.1. օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով 4.1.2. հանդես գալ առաջարկություններով Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում,

4.1.3 take part in the discussion of issues entered the agenda of the general meeting of participants of the Company, vote at the rate of fully paid shares belonging to him/her during taking decisions;	4.1.3. մասնակցել Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի օրակարգում տեղ գտած հարցերի քննարկմանը, որոշումներ ընդունելու ժամանակ քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնեմասերի ձայների չափով,
4.1.4 in the order established by the Code and Law leave the Company (irrespective of the consent of other participants); sell his/her share /a part of it/ in the charter capital of the Company or otherwise alienate it to one ore several participants of the Company or other persons.	4.1.5. Օրենսգրքով, Օրենքով սահմանված կարգով ցանկացած պահի դուրս գալ Ընկերությունից (անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից), Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ այլ անձանց,
4.1.5 participate in distribution of profit of the Company;	4.1.5. մասնակցել Ընկերության շահույթի բաշխմանը,
4.1.6 obtain information on the activity of the Company; get acquainted with the accounting reports, other documents on production and economic activity,	4.1.6. տեղեկատվություն ստանալ Ընկերության գործունեության մասին, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, Ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ:
4.1.7 suit a claim to court aimed at appealing decisions taken by the general meeting of participants at variance with the laws and other legal acts;	4.1.7. հայցով դիմել դատարան՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված եւ օրենքներին եւ այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկելու նպատակով,
4.1.8 in case of increasing the charter capital of the Company, at the Company's expense receive free of charge appropriate quantity of shares;	4.1.8. Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր,
4.1.9 in case of liquidation of the Company receive a part of property remained as a result of settlement of accounts with creditors or its value;	4.1.9. Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը՝ ,
4.1.10 Enjoy other rights established by the Law, Charter or unnimous decision of the Company Participants.	4.1.10. օգտվել Օրենքով, Կանոնադրությամբ կամ Ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված այլ իրավունքներից:
4.2 The obligations of a participant	**4.2. Մասնակցի պարտականությունները**
Participant shall be obliged to:	Մասնակիցը պարտավոր է՝
4.2.1 make investments to the Charter capital of the Company in the manner, established Company's founding agreement or unaimous decision of the Company Participants;	4.2.1. ներդրումներ կատարել Ընկերության կանոնադրական կապիտալում Ընկերության հիմնադրման մասին Պայմանագրով կամ Ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված կարգով.
4.2.2 not divulge any confidential information on the activity of the Company;	4.2.2. չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ.
4.2.3 perform obligations assumed in relation to the Company;	4.2.3. կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները.
4.2.4 Preserve the provisions of this Charter.	4.2.4. պահպանել սույն կանոնադրության նախատեսված դրույթները:

4.3 Leaving the Company by a participant. Demand of Resination of a Company Participant	**4.3. Ընկերության մասնակցի՝ Ընկերությունից դուրս գալը: Ընկերության մասնակցին Ընկերությունից հեռացնելը**
The share of a participant leaving the Company from the moment of submitting application on leaving (resignation) shall be transferred to the Company. Settlement of accounts with the participant leaving the Company shall be performed as follows: his/her share value in the charter capital (in case of non-full payment of his/her contribution to the charter capital, appropriate part of the paid share), value of the share or property shall be determined at the moment of submitting the application on leave (resignation) based on the accounting statements for the recent reporting period of the Company. The participant upon his/her consent may be provided with the property equivalent to the value of the share belonging to him/her by the decision of the general meeting if property usage right has been invested by such participant, then the Company shall preserve this right till the end of this term, and the participant is not obliged to return the properly gained profit.	Ընկերության մասնակցի՝ Ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնեմասը փոխանցվում է Ընկերությանը: Ընկերությունից դուրս եկող մասնակցի հետ հաշվարկները կատարվում են հետևյալ կերպ. կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնեմասի) կամ գույքի արժեքը որոշվում է ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա: Ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերությունից դուրս եկող մասնակցին նրա համաձայնությամբ կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք: Ընկերությունից դուրս եկած մասնակցի՝ որպես ավանդ ներդրված գույքի օգտագործման իրավունքն ընկերությունը պահպանում է մինչեւ օգտագործման իրավունքի ժամկետի ավարտը, և մասնակիցը պարտավոր չէ վերադարձնել պատշաճորեն ստացված շահույթը:
The Company is obliged to pay to the participant the share value within 6 months upon submission of the application on leave (resignation).	Ընկերությունը պարտավոր է Ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը:
The Company participant (participants), who in monetary terms manages (manage) at least 10 per cent of shares, shall have the right to judicially demand resignation of other participant of the Company if he/she in his/her activity or inactivity hampers the regular activity of the Company or makes it impracticable. The share of the leaving participant is passed into disposal of the Company. The Company is obliged to pay the leaving participant the value of his/her share in the manner established by the law and second point of the paragraph hereof.	Ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) Ընկերության առնվազն 10 (տասը) տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել Ընկերության այլ մասնակցի հեռացումն Ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը: Ընկերությունից հեռացող մասնակցի բաժնեմասն անցնում է Ընկերության տրամադրության տակ: Ընկերությունը պարտավոր է օրենքով սահմանված կարգով և սույն կանոնադրության 2 կետին համապատասխան վճարել Ընկերությունից հեռացող մասնակցի բաժնեմասի արժեքը:
4.4 Transfer /alienation/ of the participant's share /a part of it/	**4.4. Ընկերության մասնակցի բաժնեմասի /դրա մասի/ փոխանցումը /օտարումը/**
4.4.1 Company's participant shall have the right to sell or otherwise alienate his/her part of shares /a part of it/ in the charter capital of	4.4.1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը)

the Company to one or several third parties. In addition, other Company Participants shall enjoy the priority right to purchase the Participant's share (a part of it) proportional to their shares at the price offered to third parties in the manner established by the law.	վաճառել կամ այլ ձևով օտարել մեկ կամ մի քանի երրորդ անձանց: Ընդ որում, Ընկերության այլ մասնակիցները կարող են օգտվել Մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից, իրենց բաժնեմասերին համամասնորեն՝ երրորդ անձանց առաջարկված գնով եւ օրենքով սահմանված կարգով:
4.4.2 Assignment of priority right for the purchase of the share envisaged by the law is not allowed.	4.4.2. Օրենքով նախատեսված բաժնեմասի գնման նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:
4.4.3 The Company Participant who wants to sell his/her share /a part of it/ to a third party, shall via the Company notify the other participants of the Company about that in writing specifying the price and other conditions of the sale.	4.4.3. Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է օտարել իր բաժնեմասը /դրա մասը/ երրորդ անձանց, պետք է Ընկերության միջոցով գրավոր ծանուցի Ընկերության մնացած մասնակիցներին՝ նշելով օտարվող բաժնեմասի գինը և վաճառքի հետ կապված այլ պայմանները:
4.4.4 The share of the Company participant, before its final sale, may be alienated only in the part, which has been already paid.	4.4.4. Ընկերության մասնակցի բաժնեմասը, մինչև դրա լրիվ վճարումը, կարող է օտարվել միայն այն մասով, որն արդեն վճարված է:
4.4.5 The Company participant, who wants to acquire the participant's share /a part of it/ in the charter capital of the Company, shall be obliged to provide the participant one-month prior notification thereon.	4.4.5. Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է ձեռք բերել Ընկերության կանոնադրական կապիտալում վերոհիշյալ մասնակցի բաժնեմասը /դրա մասը/, պարտավոր է այդ մասին մեկ ամիս առաջ ծանուցել այդ մասնակցին:
4.4.6 Alienation of share /a part of it/ in the charter capital is performed in writing. In case of violating the form of share /a part of it/ alienation transaction in the charter capital, such transaction will be considered invalid.	4.4.6. Կանոնադրական կապիտալում բաժնեմասի /դրա մասի/ օտարումն իրականացվում է գրավոր ձևով: Կանոնադրական կապիտալում բաժնեմասի /դրա մասի/ օտարման գործարքի ձևի չպահպանման դեպքում, գործարքը ճանաչվում է անվավեր:
4.4.7 All the rights and obligations, arisen before the assignment of the share /a part of it/, are transferred to the person acquiring that share /a part of it/ in the charter capital of the Company.	4.4.7. Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասի /դրա մասի/ ձեռք բերողին փոխանցվում են Ընկերության մասնակցի՝ մինչեւ բաժնեմասի օտարումը ծագած իրավունքներն ու պարտավորությունները:
4.4.8 The shares of the charter capital of the Company are transferred to the inheritors of citizens and successors of legal entities without any limitations and the Company's agreement.	4.4.8. Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն առանց սահմանափակումների եւ Ընկերության համաձայնության , անցնում են ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին:
4. CHARTER CAPITAL	**5. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ**
5.1. Charter capital	**5.1. Կանոնադրական կապիտալը**
The Charter capital of the Company is comprised by the nominal value of contributions of its participants. The Charter capital of the Company establishes the minimum rate of property of the Company	Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է նրա Մասնակիցների ավանդների արժեքից: Ընկերության կանոնադրական

guarantying the interests of the creditors. The Charter capital of the Company amounts to AMD 1,000 (one thousand). The Company may increase or decrease the Charter capital.	կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ: Ընկերությունը կարող է ավելացնել կամ նվազեցնել կանոնադրական կապիտալը:
5.2. Shares of participants The Charter capital of the Company is paid fully by monetary means. The list of the participant of the Company and the quantity of shares belonging to each of them are presented in an attachment hereto as a constituent part thereof.	**5.2. Մասնակիցների բաժնեմասերը** Ընկերության կանոնադրական կապիտալը վճարված է դրամական միջոցներով՝ ամբողջությամբ: Ընկերության Մասնակիցների ցանկը եւ յուրաքանչյուրի ունեցած բաժնեմասերի քանակը (բաժնեմասը) բերված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս հանդիսաց ող հավելվածում
5.3. Contributions to the Charter capital of the Company	**5.3. Ավանդներն Ընկերության կանոնադրական կապիտալում**
5.3.1. Money, monetary values, securities, equipment, buildings and other property and property rights, as well as other rights having monetary value can be invested in the Charter capital of the Company. Contributions to the Charter capital of the Company by the ownership right belong to the Company.. All monetary contributions to the charter capital are transferred to appropriate bank account of the Company. Monetary contributions are deemed contributed to the appropriate bank account from the moment of their transfer.	5.3.1. Ընկերության կանոնադրական կապիտալում որպես ավանդ կարող են ներդրվել դրամ, , արժեթղթեր, սարքավորումներ, շենքեր, այլ գույք և գույքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ: Ընկերության կանոնադրական կապիտալում ավանդները սեփականության իրավունքով պատկանում են Ընկերությանը: Կանոնադրական կապիտալում բոլոր դրամային ավանդները փոխանցվում են Ընկերության համապատասխան բանկային հաշվին: Դրամային ավանդները համարվում են ներդրված համապատասխան բանկային հաշիվ նրանց փոխանցման պահից:
5.3.2. Non-monetary contributions to the charter capital are deemed contributed from the moment of conclusion of acceptance act signed between the Company and either Participant. If the nominal value of the share paid in a form of non-monetary contribution exceeds the 500-fold minimum salary established by the law at the moment of the submission of documents for the state registration of the Company, then such contribution should be evaluated by independent evaluator.	5.3.2. Կանոնադրական կապիտալում ներդրվող ոչ դրամային ավանդները համարվում են ներդրված Ընկերության և մասնակցի միջև հանձնման-ընդունման ակտի կնքման պահից: Եթե ոչ դրամային ավանդով վճարվող բաժնեմասի անվանական արժեքը գերազանցում է Ընկերության պետական գրանցման համար փաստաթղթեր ներկայացնելու պահին օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը, ապա նման ավանդը պետք է գնահատվի անկախ գնահատողի կողմից:
5.3.3. Either participant of the Company is not allowed to be exempted from the obligation of making contribution, nor is he/she allowed to offset his /her liabilities toward the Company.	5.3.3. Չի թույլատրվում Ընկերության որևէ մասնակցին ազատել ավանդի ներդրման պարտականությունից, այդ թվում՝ Ընկերության հանդեպ նրա պահանջների հաշվանցմամբ:
5.4. Increase of the Charter capital 5.4.1. Increase of the charter capital of the Company is possible only after it is being fully paid up.	**5.4. Կանոնադրական կապիտալի ավելացում** 5.4.1. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա՝ ամբողջությամբ վճարումից հետո:

5.4.2. Increase of the charter capital of the Company may be implemented at the account of the Company property, and/or at the account of additional contributions of a Participant, and/or at the account of the contributions of the third parties involved into the Company. Decision thereon will enter into force at the moment of its registration in the manner established by the state register of legal entities.	5.4.2. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է իրականացվել Ընկերության գույքի հաշվին, և/կամ մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին, և/կամ Ընկերության մեջ ընդգրկված երրորդ անձանց ավանդների հաշվին: Այդ մասին որոշումը ուժի մեջ է մտնում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից սահմանված կարգով գրանցվելու պահից:
5.4.3. Decision on the increase of the charter capital of the Company at the account of additional contributions of the Participants or contributions of the third parties is to be taken by the decision of the Company participants, by which uniform proportion for all participants in relation to the additional contributions and the amount, by which the nominal value of the share is increased.	5.4.3. Ընկերության մասնակիցների լրացուցիչ կամ երրորդ անձանց ներդրումների հաշվին կանոնադրական կապիտալի մեծացման մասին որոշումն ընդունվում է Ընկերության մասնակիցների որոշմամբ, որով որոշվում է լրացուցիչ ավանդների արժեքի, եւ այն գումարի բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացվում է նրա բաժնեմասի անվանական արժեքը:
5.4.4. Additional contributions are contributed no later than one month after taking a decision thereon.	5.4.4. Լրացուցիչ ավանդները ներդրվում են այդ մասին որոշում ընդունելուց հետո ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում:
5.4.5. The order and conditions for the increase of the charter capital of the Company by additional contributions of the Company participants are established by the law.	5.4.5. Ընկերության մասնակիցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:
5.4.6. The order and conditions for the increase of the charter capital of the Company based on the application of the Company participant or third party are established by the law.	5.4.6. Ընկերության մասնակցի կամ երրորդ անձի դիմումի հիման վրա Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:
5.4.7. If no increase of the charter capital of the Company took place, the Company is obliged in a reasonable timeframe to return the contributions to the participant or third party.	5.4.7. Եթե տեղի չի ունեցել Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում, Ընկերությունը պարտավոր է ողջամիտ ժամկետում վերադարձնել Մասնակցին կամ երրորդ անձանց իրենց ներդրած ավանդները:
5.5. Reduction of the Charter Capital	**5.5. Կանոնադրական կապիտալի նվազեցում**
5.5.1. The Company shall have the right mayor, and in cases established by the Lawis obliged to reduce its charter capital.	5.5.1. Ընկերությունն իրավունք ունի, իսկ օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը:
5.5.2. Reduction of the charter capital of the Company can be implemented by reduction of the nominal value of the share of the Participant in the charter capital and/or redemption of the share belonging to the Company.	5.5.2. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է իրականացվել կանոնադրական կապիտալում Մասնակցի բաժնեմասի անվանական արժեքի նվազեցման և/կամ Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարման ճանապարհով:
5.5.3. The Company shall not have the right to reduce its charter capital, provided that as a result its size becomes less the minimum amount of the Charter capital established by	5.5.3. Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել իր կանոնադրական կապիտալը, եթե արդյունքում դրա չափը կպակասի Ընկերության Կանոնադրությունում

the law and other legal acts at the moment of submitting documents for state registration of appropriate changes to the Charter of the Company; and in case when the Company is obliged to reduce its Charter capital from the size thereof at the moment of the state registration of the Company.	համապատասխան փոփոխությունների պետական գրանցման համար փաստաթղթեր ներկայացնելու պահին օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, իսկ այն դեպքում, երբ Ընկերությունը պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը՝ Ընկերության պետական գրանցման պահին օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կանոնադրական կապիտալի չափից:
5.5.4. Reduction of the Charter capital by reduction of the Participant's nominal value of the share of should be implemented by preserving the size of the Participant's share	5.5.4. Կանոնադրական կապիտալի նվազեցումը մասնակցի բաժնեմասի անվանական արժեքի նվազեցման ճանապարհով պետք է իրականացվի մասնակցի բաժնեմասի չափը պահպանելով:
5.5.5. If after the end of the third or any consequent financial year the values of net assets of the Company are less of the Charter capital, then the Company is obliged to declare the reduction of the charter capital and register this reduction as required in the established manner.	5.5.5. Եթե երկրորդ կամ յուրքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել կանոնադրական կապիտալի նվազեցում և սահմանված կարգով գրանցել այդ նվազեցումը:
6. GENERAL MEETING OF PARTICIPANTS	**6. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**
6.1. Supreme body of the Company The supreme management body of the Company is the general meeting of participants (or their authorized representatives), which is entitled to pass any final decision on any management and operational issues. The general meetings of the participants can be regular (annual) or extraordinary. The general meetings approving the annual operation results of the Company are convened no later than two month and no later than six-month period after the end of each financial year. Extraordinary meetings are convened by the director of the Company on any issue.	**6.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը** Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների (կամ նրանց լիազոր ներկայացուցիչների) ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման եւ գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովները կարող են լինել հերթական (տարեկան) կամ արտահերթ: Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատող ընդհանուր ժողովները գումարվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ վեց ամիս անց: Արտահերթ ժողովները գումարվում են Ընկերության տնօրենի կողմից՝ ցանկացած հարցի կապակցությամբ:
6.2. Exclusive authorities of the general meeting of participants of the Company The exclusive authority of the general meeting of participants is to take decisions on the issues indicated herein. The issues entrusted to the exclusive authority of the general meeting cannot be transferred by the latter to the authority of other management bodies of the Company, except the cases specified by the law.	**6.2. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները** Մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն է վերապահված սույն կետում նշված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունումը: Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Ընկերության կառավարման այլ

The following issues are referred to the exclusive authority of the general meeting of the Company participants: 6.2.1. determination of the main directions of the Company operation, as well as the issues pertaining to estblishment of organizations and participation in other organizations /including acquisition of shares in economic entities/, as well as termination of such participation;	մարմինների իրավասությանը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Ընկերության մասնակիցների Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում. 6.2.1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ այլ կազմակերպություններում մասնակցելու հարցերը /այդ թվում՝ տնտեսական ընկերություններում բաժնետոմսերի, բաժնեմասերի ձեռք բերման հարցերը/, ինչպես նաև այդպիսի մասնակցության դադարեցումը.
6.2.2. provision, termination or limitation of additional rights to the participants;	6.2.2. Մասնակիցներին լրացուցիչ իրավունքների տրամադրումը, դադարեցումը կամ սահմանափակումը.
6.2.3. Establishment or termination of additional obligations for the participants.	6.2.3. Մասնակիցների համար լրացուցիչ պարտականությունների սահմանումը կամ դադարեցումը.
6.2.4. approval of monetary evaluation for non-monetary contributions to the Charter capital;	6.2.4. Կանոնադրական կապիտալում ոչ դրամային ավանդների դրամական գնահատման հաստատումը.
6.2.5. alteration of the size of Charter capital of the Company;	6.2.5. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը.
6.2.6. taking decision on reorganization of the Company;	6.2.6. Ընկերության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.
6.2.7. taking decision on liquidation of the Company;	6.2.7. Ընկերության լուծարման մասին որոշման ընդունումը.
6.2.8. introduction of amendments and additions to the charter of the Company, approval of the Company's charter in a new edition;	6.2.8. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների եւ լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
6.2.9. increase of the charter capital of the Company at the account of the property of the Company or additional contributions of the Participants;	6.2.9. կանոնադրական կապիտալի ավելացումը Ընկերության գույքի կամ մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին.
6.2.10. selection of an auditor and early termination of his/her authorities, establishment of the size for remuneration, scope of authorities and obligations;	6.2.10. Վերստուգողի ընտրություն և նրան լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրա պարգևատրումների չափի, լիազորությունների և պարտականությունների սահմանումը.
6.2.11. approval of the Company annual reports, balance sheets, distribution of profits and losses, as well as approval of annual results of its branches, representations and offices;	6.2.11. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների եւ վնասների բաշխման հաստատումը, ինչպես նաեւ մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը.
6.2.12. approval of documents regulating the internal activity of the Company;	6.2.12. Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի հաստատումը.
6.2.13. creation of detached subdivisions and offices of the Company, termination of their activity, approval of their charters;	6.2.13. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների եւ հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
6.2.14. selection of the Company director,	6.2.14. Ընկերության տնօրենի ընտրությունը, նրա

establishment of his/her authorities and their early termination, the size for remuneration, determination of the scope of authorities and obligations;	լիազորությունների սահմանումը և վաղաժամկետ դադարեցումը, պարգևատրումների չափի, լիազորությունների և պարտականությունների որոշումը.
6.2.15. approval of large-scale transactions related acquisition or alienation of property;	6.2.15. Ընկերության կողմից գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքների կատարմանը հավանություն տալը.
6.2.16. approval of transactions with substantial interest;	6.2.16. այն գործարքներին հավանություն տալը, որոնցում առկա է շահագրգռվածություն.
6.2.17. implementation of audit, approval of an auditor and deciding on the size of compensation for his/her services;	6.2.17. աուդիտորական ստուգման իրականացումը, աուդիտորի հաստատումը և նրա ծառայությունների վճարման չափի որոշումը.
6.2.18. creation of reserve fund and establishment of the dates and sizes for the contribution therein;	6.2.18. պահուստային ֆոնդի ստեղծումը և դրա մեջ ներդրումների ժամկետների և չափերի սահմանումը.
6.2.19. appointment of liquidation commission of the Company and approval of liquidation balance sheet;	6.2.19. Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը.
6.2.20. Other issues specified by the law.	6.2.20. օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:
6.3. The order for taking decisions by the general meeting of the Participants	**6.3. Մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումների ընդունման կարգը**
6.3.1. Resolution of the issues entrusted to the authority of the general meeting of the Company participants is performed at the meeting itself or by inquiry. In the latter case the draft decision is to be sent to the participants, who should express their opinion in writing. The meeting is deemed lawful if more than a half of total voting shares is present. Director participates at the general meting with right of deliberative vote. Auditor conducted the last year auditing of the Company, or if auditing was conducted by a legal entity, then its authorized representative can be invited to the meeting with the right of deliberative vote.	6.3.1. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի լուծումը կատարվում է ժողովի նիստում կամ հարցման միջոցով: Վերջինս դեպքում որոշման նախագիծն ուղարկվում է մանակիցներին, որոնք պետք է գրավոր հայտնեն իրենց կարծիքը: Ժողովը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում են ընդհանուր ձայների կեսից ավելի իրավունք ունեցող մասնակիցները: Ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է տնօրենը: Նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է հրավիրվել Ընկերության վերջին տարվա աուդիտն իրականացրած անձը կամ, եթե աուդիտն իրականացված է իրավաբանական անձի կողմից, դրա լիազոր ներկայացուցիչը:
6.3.2. Decisions on the issues envisioned under para. 6.2.2., 6.2.3., 6.2.4., 6.2.6., and 6.2.7. are to be taken by the General Meeting of the participants unilaterally.	6.3.2. Սույն կանոնադրության 6.2.2, 6.2.3, 6.2.4, 6.2.6, և 6.2.7 կետերով նախատեսված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են մասնակիցների Ընդհանուր ժողովի կողմից միաձայն:
6.3.3. Decisions on the issues envisioned under para. 6.2.5., 6.2.8., 6.2.9., 6.2.13., and 6.2.19. are to be taken by at least two thirds of the total votes of the General Meeting of the participants present at the meeting.	6.3.3. Սույն Կանոնադրության 6.2.5., 6.2.8., 6.2.9., 6.2.11., 6.2.13. 6.2.15., և 6.2.19. կետերով նախատեսված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի

6.3.4. Decisions on the rest of the issues are to be taken by the simple majority of the votes of the participants	առնվազն երեք քառորդի մեծամասնությամբ: 6.3.4. Մնացած հարցերով Ընդհանուր ժողովը որոշում է կայացնում մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:
6.4. Supervisory board 6.4.1. The Company shall have a supervisory board, elected by the General Meeting. Each member shall be elected for 2 years	**6.4. Խորհուրդ** 6.4.1. Ընկերությունը պետք է ունենա Ընդհանուր ժողովի կողմից ընտրված Խորհուրդ: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ընտրվում է 2 տարի ժամկետով:
6.4.2. The Supervisory Board shall consist of three (3) members.	6.4.2. Խորհուրդը պետք է բաղկացած լինի երեք (3) անդամներից:
6.4.3. The Chairperson and the Vice-Chairperson of the Supervisory Board shall be elected by the Members of the Supervisory Board. The Supervisory Board members, Chairperson and Vice-Chairperson each shall have a term of office of two (2) years, and each shall be eligible for consecutive terms of office upon reappointment by the original appointing Party.	6.4.3. Խորհրդի նախագահը և նրա տեղակալը ընտրվում են Խորհրդի անդամների կողմից: Խորհրդի անդամների, Նախագահի և նրա տեղակալի պաշտոնավարման ժամկետը երկու (2) տարի է, և նրանցից յուրաքանչյուրը կարող է վերընտրվել իր պաշտոնում հաջորդ ժամկետների համար՝ նշանակող կողմի կողմից վերանշանակումը կատարելուց հետո:
6.4.4. The powers of the Supervisory Board shall be: (a) Advice to the director in all questions regarding correspondence of planned actions with the principle policy of the company. (b) Advice to the director regarding all decisions not related to usual daily business. (c) Advice to the director in all questions regarding hiring or suspension of employees or 3rd Parties. The Supervisory Board shall have the power to unanimously take decisions exclusively on the following matters: (a) Recommendations on approval of investments, and presentation thereof to the approval of General Meeting; (b) Recommendations on establishment of subsidiary organizations and purchase or sell of shares belonging to the Company, and presentation thereof to the approval of General Meeting; (c) Approval of the annual plans, including work programs, financing budgets; (d) Recommendations on approval of annual financial statements, and presentation thereof to the approval of General Meeting.	6.4.4. Խորհրդի լիազորությունների մեջ են. ա/ Խորհրդատվություն տրամադրել տնօրենին կապված ծրագրավորված գործողությունների եւ Ընկերության հիմական քաղաքականության համապատասխանության վերաբերյալ բ/ Խորհրդատվություն տրամադրել տնօրենին կապված բոլոր որոշումների հետ որոնք կապված չեն առօրյա գործունեության հետ գ/ Խորհրդատվություն տրամադրել տնօրենին կապված աշխատակիցների կամ երրորդ անձանց վարձելու կամ ազատելու հետ: Խորհրդն իրավասու է միաձայն որոշումներ կայացնել բացառապես հետևյալ հարցերի շուրջ. ա/ առաջարկություններ ներդրումները հաստատելու վերաբերյալ և դրանց ներկայացումն Ընդհանուր Ժողովի հաստատմանը, բ/ առաջարկություններ դուստր ընկերությունների ստեղծման, Ընկերությանը պատկանող բաժնեմասերի առքուվաճառքի, ինչպես նաև դրանց ներկայացումն Ընդհանուր Ժողովի հաստատմանը, գ/ տարեկան ծրագրերի հաստատումը, ներառյալ աշխատանքային ծրագրերը և ֆինանսական բյուջեները, դ/ առաջարկություններ տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատման և դրանց ներկայացումն Ընդհանուր Ժողովի հաստատմանը:
7. EXECUTIVE BODY **7.1. Director** 7.1.1. Management over the current activity of the Company is to be conducted by the	**7. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ** **7.1. Տնօրենը** 7.1.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության

executive body of the Company – director /hereinafter referred to as “the director”/ The director is elected by the decision of the General Meting of the Company. The authorities of the director may be early terminated by the decision of the general meeting in cases stipulted by the contract and legislation. The director reports to the general meeting of the participants .	գործադիր մարմնի՝ տնօրենի կողմից (այսուհետ՝ «տնօրեն»): Տնօրենը ընտրվում է Ընկերության Մասնակիցների Ընդհանուր ժողովի որոշմամբ: Տնօրենի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ընդհանուր ժողովի որոշմամբ՝ պայմանագրով եւ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Տնօրենը հաշվետու է Մասնակիցների ընդհանուր ժողովին:
7.1.2. The authorities and functions of the director as a sole executive body by the decision of the general meeting of the participants of the Company may be transferred to a commercial organization or individual entrepreneur /hereinafter referred to as “the Manager”/.	7.1.2. Ընկերության մասնակիցների Ընդհանուր ժողովի որոշմամբ տնօրենի՝ որպես միանձնյա գործադիր մարմնի լիազորություններն ու գործառույթները կարող են փոխանցվել առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ «Կառավարիչ»):
7.2. Contract The Company and the director shall conclude a contract, which in addition to the provisions hereof shall establish the rights, obligations and responsibilities, remuneration and other conditions of the activity of the director.	**7.2. Պայմանագիրը** Ընկերությունն ու տնօրենը կնքում են պայմանագիր, որով, ի լրումն սույն Կանոնադրության դրույթների, սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը և նրա գործունեության այլ պայմանները:
7.3. Authorities of the director The director shall:	**7.3. Տնօրենի իրավասությունները** Տնօրենը՝
7.3.1. without a power of attorney act on behalf of the Company, including representation of its interests and conclusion of contracts;	7.3.1. առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.
7.3.2. manage the property of the Company, including its monetary resources in the manner established by the current legislation and the present charter;	7.3.2. տնօրինում է Ընկերության գույքը, ներառյալ նրա դրամական միջոցները, գործող օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.
7.3.3. issue power of attorneys to appear on behalf of the Company, also by the right of transfer;	7.3.3. տալիս է լիազորագրեր՝ Ընկերության անունից հանդես գալու համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով.
7.3.4. implement management of the staff of the Company in conformity with the staffing policy and decisions of the general meeting of the Company; issue orders for appointment of personnel to their respective positions; their dismissal; establish the sizes for remuneration and conditions for salary; apply incentives, diciplinary sanctions and approve job descriptions;	7.3.4 իրականացնում է Ընկերության աշխատակիցների ղեկավարումը՝ կադրային քաղաքականությանը և մասնակիցների Ընդհանուր ժողովի որոշումներին համապատասխան, տալիս է հրամաններ՝ Ընկերության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց ազատման վերաբերյալ, սահմանում է պարգևատրումների չափերը և վարձատրության պայմանները, կիրառում է խրախուսման միջոցներ, նշանակում է կարգապահական տույժեր և հաստատում է պաշտոնական հրահանգներ.
7.3.5. take decisions on the issues not related to the exclusive authority of the general meeting	7.3.5. որոշումներ է ընդունում մասնակիցների Ընդհանուր ժողովի բացառիկ

of the Company participants. 7.3.6. the director is authorized to manage the monetary resources of the Company, as well as make monetary transfers, withdraw money from bank account, perform other transactions with bank accounts within the limits of set-forth restrictions and in the order established by the contracts on bank accounts; 7.3.7. the director, not without approval of the general meeting of the participants of the Company, may not execute any donation of the property belonging to the Company or proprietary rights, nor he/she may perform any gratuitous alienation; 7.3.8. the director of the Company may require extraordinary session of the general meeting of the Company Participants.	իրավասությանը չվերապահված հարցերի կապակցությամբ. 7.3.6. տնօրենը իրավասու է տնօրինել Ընկերության դրամական միջոցները, այդ թվում՝ կատարել դրամական փոխանցումներ, բանկային հաշվից հանել դրամ, կատարել այլ գործառնություններ բանկային հաշիվների հետ կապված սահմանափակումների սահմաններում և բանկային հաշվի պայմանագրերում սահմանված կարգով. 7.3.7. տնօրենը չի կարող առանց մասնակիցների Ընդհանուր ժողովի հավանության կատարել Ընկերությանը պատկանող գույքի կամ գույքային իրավունքների նվիրատվություն կամ այլ անհատույց օտարում: 7.3.8. Ընկերության տնօրենը կարող է պահանջել Ընկերության Մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի անցկացում:
7.4. Obligations and responsibilities of the director the director shall: 7.4.1. ensure current operation of the Company; 7.4.2. secure implementation of the decisions of the General Meeting of the Company participants and report on the results thereof to the General Meeting; 7.4.3. organize paper work of the Company and its storing, submission of the papers to the Participants or other interested parties; 7.4.4. manage and exercise control over the work of the staff; 7.4.5. secure proper paper work of the Company and preserve duly organization of office work; 7.4.6. bear responsibility for keeping accounting, preserving the legislative provisions while performing economic operations, preparing financial statements, annual financial reports, balance sheets and other mandatory financial statements /hereinafter referred to as “the Annual Report”/, as well as ensuring timely submission of the Annual Report to the general meeting of the participants and appropriate state bodies; 7.4.7. undertake reasonable measures to protect	**7.4. Տնօրենի պարտականությունները և պատասխանատվությունը** Տնօրենը՝ 7.4.1. ապահովում է Ընկերության ընթացիկ գործունեության իրականացումը. 7.4.2. ապահովում է մասնակիցների Ընդհանուր ժողովի որոշումների կատարումը և հաշվետու է Ընդհանուր ժողովին դրանց կատարման արդյունքների համար: 7.4.3. կազմակերպում է Ընկերության փաստաթղթերի վարումը և պահպանումը, դրանց ներկայացումը մասնակիցներին կամ այլ շահագրգիռ անձանց. 7.4.4. ղեկավարում և հսկում է աշխատակիցների աշխատանքը. 7.4.5. ապահովում է Ընկերության գործավարության և գրասենյակային աշխատանքների ճիշտ կազմակերպումը. 7.4.6. կրում է պատասխանատվություն հաշվապահական հաշվառման կազմակերպման, տնտեսական գործառնությունների կատարման ժամանակ օրենսդրության պահպանման, ֆինանսական հաշվետվության, տարեկան ֆինանսական հաշվետվությունների, հաշվեկշիռների և այլ պարտադիր ֆինանսական հաշվետվությունների (այսուհետ՝ «Տարեկան Հաշվետվություն»), ինչպես նաև Մասնակիցների ընդհանուր ժողովին և համապատասխան պետական մարմիններին Տարեկան Հաշվետվության ժամանակին ներկայացումն ապահովելու համար. 7.4.7. ձեռնարկում է խելամիտ միջոցներ

the property and proprietary rights of the Company, and bear responsibility for the entrusted property of the Company;	Ընկերության գույքի և գույքային շահերի պաշտպանման համար և պատասխանատվություն է կրում իրեն վստահված Ընկերության գույքի համար.
7.4.8. perform other functions envisioned under other documents regulating the activity of the Company, which are connected to the management of the Company's activity.	7.4.8. կատարում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և Ընկերության գործունեությունը կարգավորող այլ փաստաթղթերով նախատեսված այլ գործառույթներ, որոնք կապված են Ընկերության գործունեության ղեկավարման հետ:
8. REPORTING	**8. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**
8.1. Reporting year A reporting year of the Company coincides with a calendar year beginning from the 1st of January up to the 31st of December inclusively.	**8.1. Հաշվետու տարի** Ընկերության հաշվետվության տարին օրացուցային տարին է՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31 – ը ներառյալ:
8.2. Accounting documents and reports The Company in the order established by the RA legislation shall implement accounting and submit statistical report. The Company, under contractual bases, may transfer accounting to any specialized organization or professional accountant.	**8.2. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և հաշվետվությունները** Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաշվապահական հաշվառում եւ ներկայացնում վիճակագրական հաշվետվություն. Ընկերությունը կարող է պայմանագրային հիմունքներով փոխանցել հաշվապահական հաշվառման վարումը, մասնագիտացված կազմակերպությանը կամ հաշվապահ – մասնագետին:
8.3. Currency Accounting of the Company property, obligations and economic operations shall be performed in RA drams. Calculation between the RA dram and currency are to be performed according to the exchange rate officially established by the RA Central Bank at the date of the transaction, unless otherwise established by the legislation.	**8.3. Արտարժույթը** Ընկերության գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառությունների հաշվապահական հաշվառումը կատարվում է ՀՀ դրամով. ՀՀ դրամի և արտարժույթի միջև հաշվարկները կատարվում են ըստ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական տարադրամային փոխարժեքի՝ գործարքի կատարման օրվա դրությամբ, եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ:
8.4. Distribution of profit The Company shall have the right to perform distribution of its profit among the participants of the Company under the decision of the general meeting of the Company participants. Payments shall be made by monetary means or other property, and in cases allowed by the law also in currency.	**8.4. Շահույթի բաշխումը** Ընկերությունն իրավունք ունի իրականացնել իր շահույթի բաշխումն Ընկերության մասնակիցների միջև՝ մասնակիցների Ընդհանուր ժողովի որոշմամբ: Վճարումները կատարվում են դրամական միջոցներով կամ այլ գույքով, իսկ օրենքով թույլատրված դեպքերում՝ նաև արտարժույթով:
8.5. Funds The Company may create reserve and other funds in the order and sizes envisioned by appropriate decision of the general meeting of the Company participants.	**8.5. Ֆոնդերը** Ընկերությունը կարող է ստեղծել պահուստային և այլ ֆոնդեր մասնակիցների Ընդհանուր ժողովի համապատասխան որոշմամբ նախատեսված կարգով և չափերով:

9. DOCUMENTS AND INFORMATION, COMPANY'S AUDITOR **9.1. Filing of documents** The Company bears responsibility for filing the documents of the Company in conformity with the requirements of the legislation. **9.2. Order of familiarization** The Participant or other interested persons for the familiarization with documents of the Company shall apply to the director in writing according to the location of the executive body. In this case the Company director shall be obliged within 5 working days to provide the required documents in writing. **9.3. Auditor** 9.3.1. Control over the financial activity of the Company shall be implemented by the auditor selected by the general meeting. Any physical person not involved into the management bodies of the Company may serve as an Auditor. 9.3.2. Auditor shall follow the performance of the decisions taken by the executive bodies of the Company; check the correspondence of the Company documents to appropriate laws, other legal acts and the present charter. Auditor shall have the right to implement audit of the annual results of the financial-economic performance of the Company, audit the financial-economic performance of the Company on his/her own initiative, decisions of the meeting, as well as under the requirement of a participant owning at least 10 percent of shares in the charter capital of the Company. Besides, the auditor on his/her own initiative may annual performs no more than two audits. With the request of the auditor he/she should be provided all necessary documents, materials and explanations pertaining to financial-economic performance of the Company. 9.3.3. During approval of the annual balance sheet of the Company, the auditor's conclusion thereon is obligatory.	**9. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ** **9.1. Փաստաթղթավորում** Ընկերությունը կրում է պատասխանատվություն Ընկերության փաստաթղթավորման համար՝ օրենսդրության պահանջներին համապատասխան: **9.2. Ծանոթացման կարգը** Ընկերության փաստաթղթերի ծանոթացման համար Մասնակիցը կամ այլ շահագրգիռ անձինք գրավոր կերպով դիմում են Ընկերության տնօրենին՝ ըստ Ընկերության գործադիր մարմնի գտնվելու վայրի: Այս դեպքում Ընկերության տնօրենը պարտավոր է աշխատանքային 5 օրվա ընթացքում գրավոր ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: **9.3. Վերստուգողը** 9.3.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է վերստուգողը, որն ընտրվում է ժողովի կողմից: Վերստուգող կարող է լինել ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված գործունակ ֆիզիկական անձը: 9.3.2. Վերստուգողը հետևում է ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը: Նա իրավունք ունի իրականացնել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգել ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ժողովի որոշմամբ, ինչպես նաև ընկերության կանոնադրական կապիտալում առնվազն 10 տոկոսի բաժնեմասի սեփականատեր հանդիսացող մասնակցի (մասնակիցների) պահանջով: Ընդ որում, վերստուգողը սեփական նախաձեռնությամբ ստուգումներ կարող է իրականացնել տարեկան ոչ ավելի քան երկու անգամ: Վերստուգողի պահանջով նրան պետք է տրամադրվեն ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները: 9.3.3. Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:

10. REORGANIZATION AND LIQUIDATION	**10. ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**
10.1. Reorganization 10.1.1. The Company may be voluntarily reorganized by the decision. Other bases and order for reorganization of the Company of the General meeting are determined by the Law. 10.1.2. Reorganization of the Company may be implemented in the form of amalgamation, division, detachment and reorganization. 10.1.3. The Company, except reorganization in the form of joining to other legal entity, shall be deemed reorganized from the state registration of newly created legal entities.	**10.1. Վերակազմակերպումը** 10.1.1. Ընկերությունը կարող է կամավոր վերակազմակերպվել Ընդհանուր ժողովի որոշմամբ: Ընկերության վերակազմակերպման այլ հիմքերը և կարգը որոշվում են Օրենքով 10.1.2. Ընկերության վերակազմակերպումը կարող է իրականացվել միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման, վերակազմավորման ճանապարհներով. 10.1.3. Ընկերությունը, բացառությամբ այլ իրավաբանական անձի միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:
10.2. Liquidation The Company may be voluntarily liquidated by the decision of the general meeting of the Company participants. Other bases and order for liquidation of the Company are determined by the Law . In case of liquidation of the Company, the general meeting of the Company participants shall appoint a liquidation commission /hereinafter referred to as "the Liquidation commission"/.	**10.2. Լուծարումը** Ընկերությունը կարող է կամավոր լուծարվել մասնակիցների Ընդհանուր ժողովի, որոշմամբ: Ընկերության լուծարման այլ հիմքերը և կարգը որոշվում են օրենքով: Ընկերության լուծարման դեպքում մասնակիցների Ընդհանուր ժողովը նշանակում է լուծարման հանձնաժողով (հետագայում՝ « Լուծարման հանձնաժողով »):
10.3. Responsibilities of the Liquidation Commission The Liquidation commission shall: 10.3.1. implement all authorities related to the management of the Company's activity; 10.3.2. evaluate the Company's property; 10.3.3. perform settlement of accounts with the creditors and with its Participants; 10.3.4. compile liquidation balance sheet and submit it to the approval of the general meeting of the Company participants.	**10.3. Լուծարման հանձնաժողովի պարտականությունները** Լուծարման հանձնաժողովը՝ 10.3.1. իրականացնում է Ընկերության գործունեության կառավարմանը վերաբերող բոլոր լիազորությունները. 10.3.2. գնահատում է Ընկերության գույքը. 10.1.3. կատարում է Ընկերության պարտատերերի՝ ներառյալ իր մասնակիցների հետ հաշվարկները. 10.1.4. կազմում է լուծարման հաշվեկշիռը և ներկայացնում է այն մասնակիցների Ընդհանուր ժողովի հաստատմանը:
10.4. Distribution of property during liquidation The property of the Company remained after settlement of accounts with the creditors shall be distributed by the liquidation commission among the Company participants.	**10.4. Լուծարման ժամանակ գույքի բաշխումը** Պարտատերերի հետ ունեցած հաշվարկների կատարումից հետո մնացած Ընկերության գույքը բաշխվում է լուծարման հանձնաժողովի կողմից Ընկերության մասնակիցների միջև .
10.5. Liquidation completion The Company is deemed liquidated and its activity terminated from the moment of state registration.	**10.5. Լուծարման ավարտը** Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ պետական գրանցման պահից:
10.6. Concluding Provision This Charter is consisting of .... pages and one	**10.6.** Եզրափակիչ դրույթ

attachment, is made in English and Armenian languages, and if there is inconsistence between Armenian and English versions the English one prevails.	Սույն կանոնադրությունը բաղկացած է ..... էջից և մեկ հավելվածից, կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում հայերեն և անգլերեն տարբերակների միջև հակասության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

«Երևան Տրանսպորտ Օփերեյշն » ՍՊԸ-Ի
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևան Տրանսպորտ Օփերեյշն»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
մասնակիցների ցուցակ

Մասնակցի տվյալները	բաժնեմասի չափը /տոկոս/	բաժնեմասի անվանական արժեքը դրամով
ՍՎԱՐԿՈ	75 /յոթանասունհինգ/	750000 /յոթ հարյուր հիսուն հազար/
ԵՐԵՎԱՆ Համայնք	25 /քսանհինգ/	250000 /երկու հարյուր հիսուն հազար /

ATTACHMENT TO THE CHARTER OF
“Yerevan Transport Operation” LLC

THE LIST OF PARTICIPANTS OF
“Yerevan Transport Operation” LIMITED LIABILITY COMPANY

Details on participants	Share /quantity in percentage/	Nominal value of share /in AMD/
SWARCO	75 /seventy-five /	750000 /seven hundred fifty thousand /
YEREVAN COMMUNITY	25 /twenty-five/	250000 /two hundred fifty thousand/